

ճանչնային՝ մամուլն ընդհանրապէս աւելի եռանդեամբ զինքը կը պաշտպանէր : Յուլիս 7ին թայմը հետեւեալ տողերը կը գրէր. « Գաղղիական ղեւազրգութեան այսպէս բորբոքելուն վրայ պէտք չէ զարմանալ, այլ զայն զրգողին անխոհմուն- թեան » : Կը յիշէր որ « Լէոբոլտի եղբայրը Ռումանիոյ այն Կարոլոս իշխանն է՝ որ չորս տարի առաջ՝ այնպէս վարպետութեամբ իրեն Գահ մը պատրաստեց . այս կերպով Բրուսիա յԱրևելս և յԱրևմուտս նախազօր կ'ըլլայ և իտալական դաշնակցութեամբ՝ կը պատէ զԳաղղիա օգնական պետութեամբ » : Կը ճանչնար որ 'ի Գաղղիա հասարակաց կարծիքը այնպէս բուռն և իրաւացի կերպով զըր- զըրեալ է՝ որ ոչ մի տէրութիւն կրնար դէմ գնել : Կը պախարակէր այն գաղտնի կերպը՝ որով յանդէտս այլոց պետութեանց՝ պատրաստուած էր այն հատարակ և ամօթալի պետական հարուածը : Եթէ այն յարաբերութեանց մէջ՝ ընդդէմ Գաղղիոյ կանխապէս մտածեալ հակառակութիւն մը չկար, ի՞նչ պատ- ճառաւ զաղտնի կը պահուէր :

Յուլիս 6ի յայտարարութիւնը՝ որ Գաղղիոյ ձախօրդով ինններէն և պարտութե- նէն վերջը այնչափ պախարակուեցաւ՝ այն ատեն անկողնակից ընդունելութիւն մը գտաւ, և սպանիական միջադէպը համազգային խնդրոյ մը վերածեց : Ի Գերմա- նիա մեծ յուզումն պատճառեց, որոյ մասնակցեցան կարծեմ՝ նաև Մուլքէ և թագաժառանգն : Հիւսիսային պետութիւնք կը տրանջէին Պիզմարքի փաստաբեր դիւանագիտութեան վրայ, որ առանց գերմանական ժողովրդեան ուղղակի շահերուն՝ զԲրուսիա միջազգային ծանր խնդրոյ մը մէջ կը գտնուէր :

Շարայարեչի

Ն Ա Մ Ա Կ Խ Մ Բ Ա Գ Ր Ի Ն

ԱՅՍ օրերում, յայտնի ազգային երգի Գ. Ներսէս Շահյանեանն, որ տարիներէ 'ի վեր աստ 'ի Նապօլի թատերական բարձր երգեցողութեամբ կը պարապէր իւր սիրայի ծայնիմ մշակութեամ, կը վերադառնայ 'ի հայրենիս : Յիշեալ Պարոնն իմպէս զիտէր, վեց ամսով չսփ յարաջ աւարտեց իւր ուսումըն, և առաջիմ ամգամ Մալտա կղզիմ գնաց երգելու յԱրքունական թատրօմում, ուր ամեմայմ յաշողութեամբ պսակեցաւ իւր առաջիմ քայլափոխմ, յորմէ յետոյ փութաց վերադառնալ 'ի Նապօլի, որպէս զի աստ ևս յԱրքունական Սամ Կարլօ կոչուած փառաւոր թատրօմում երգէր : — Սակայն՝ այլակերպ տնօրինեցիմ Երկինք . իւր սիրասում ծաղկամայ ամուսի- մըն Ամմա տիկին գոհ գնաց 'ի սակաւ աւուրս, հակառակ ամեմայմ ջամից, Ինֆլու- էնցայի չար տեսակին : Որով և իմքմ Գ. Ներսէսն ալ սգալիք՝ առնելով իւր երկու մանկիկներմ Արմիկ և Շուշանիկ 'ի միասիմ, որոշեց գնալ 'ի հայրենիս . ուր հապա իմքմ շտապաւ պէտք է հասնի միմչև ցՄ . Պետերբուրգ, զատկական օտօներու առ- թիւ երգելու համար կպսիւրսական թատրօմում, ում արձամագրուած է արդէմ իք- ըն ամգամ :

Յիշեալ պարո՞մ, յընթացս իւր ուղևորութեամ, որչափ գիտեմ ես, շերմ դիտաւ
ւորութիւն կամ թէ՛ փափայք ունի զնալ այցելու Սուրբ Ուխտիդ՝ և ողջունել մտաւն
զՍուրբ Միաբանութիւնդ Միխիթարեան որ 'ի Չեմնետիկ:

Յոյզ ընդ զդոյս կ'ողորկեմ Ձեզի և իմ մէկ տկար երգս, զոր այս առթիւ մաւ
տուցած եմ բարեկամս իբրև ողջոյմ հրատեշտի, և որուն հետ իբրև եղբայր կենա-
կից եղանք այնչափ ատեն յայսմ պամդիտութեամ...:

Եթէ արժամի կը դատիրք սուպի միմ և զմիւսն պատուական «Բազմավէպ համդի-
տումը», խնդրեմ որ այժմէն ըմբռնիք յարգանացս ամկեղծ հաւատտեաց հետ և
յատուկ շնորհակալութիւնս: Խ. Ե.

ՍԵՏԱՆ ԵՆԱՔՆԵԱՆ

ՈՂՋՈՅՆ ՀՐԱԺԵՇՏԻ

ԱՌ ԱՆՅՈՒԲԳԱԿԱՆ ԲԱՐԵԿԱՄԵ ՌՍ

Պ. ՆԵՐՍԷՍ ՇԱՀԼԱՄԵԱՆ

Երթաս բարեաւ, սիրուն ըմկեր,
Սէ՛ր իմ գոհար, երթաս բարեաւ.
Անցի՛ր ցամաք, անցի՛ր ծովեր,
Ընդ անջրպետն անցի՛ր անբաւ.
Ես մորմոքած դէպ 'ի քո չում
չբաժեշտի տամ քեզ ողջոյն:
Ես ակնապիշ դիտեմ աստէն
Ընդ օդս ամհում քո ելևէջ,
Ինչպէս Արծիւ՝ թևերուդ մէջ
Աւբերելով Շուշանն Աւրմէն,
Միջև հասնիլ հայրենի՞ն տուն՝
Ձագուկներուդ յապահով բոյն:
Մաւառնելով բայց ընդ եթեր
Մատի համբոյր մի զեփիւռիմ,
Որ քո սիրոյն անետաբեր
Միշտ դէպ 'ի մեզ գայ շերմագիմ.
Թո՛ղ այդ զեփիւռ խաղայ հեզիկ
Նէապոլսում խնդրէ զԱմիկ,
Ներա շիրմիմ բաշխէ համբոյր
Գէս պէս ծաղիկք, համ, խումկ ու բոյր.
Օրհնութիւն յիշատակիմ
Լեցի յաւէտ քոյ Ամիկիմ...:

Համակերպած կամաց էիմ
Խաղաղ հոգևով հավաք սլացիք
Գնմ հասիք ասպարհիգիմ

Ամձմիւր ջանիւք զոր քեզ բացիւր-
Ն'լ ամվհեհր 'ի վեհ համդէս,
Թատերաբեմն է քո բաժիմ,
Մարտակարմ այժ՝ աշխարհիմ,
Ուր խի՞նդ ու վիշտ զան ցամզ 'ի տես:
Մոխակօրէն յար քաղցրաւաչ
Հոն արծակէ խորունկ հառաչ,
Երբ ըզմայմանցդ մէջ իմանաո
Թէ մի բան կայ միշտ պակաս...:
Հեծէ՛ մընչէ՛ զերդ աղաւթ
Որ կորսցուց զիւր վարուժան.
Եւ ամէն ոք որ վիշապ մ'ունի
Միխիթարուի թո՛ղ առ ժամայն...:
Բայց զերդ առիծ արծակէ՛ ծայմ
Դարանակալ թշնամոյն դէմ,
Երբոր տեսնես զԱրդարութիւն
Բռնաւորէմ ոտնակոխան:

Այլ քան զամէն մաղթեմ ես քեզ,
Ազմիւ Ներսէսդ իմ Շահլամեան,
Երբոր ցաւած քեզ պէս շատեր
Տեսնես շուրջդ, կամ թէ այլուր,
Աստուածատուր ծայմիդ 'ի ուր
Խնդրել խում մի դիւր և թեթև,
Դէ՛ն, ըսփոփիր դու իմքմովիմ
Եւ ըսփոփամք լեր ըմկերիմ,

նա, աղքատիմ թիկուճք ու թև...:
քո մակատիմ հաւատք յոյս, սէք,
թող բոլորեմ պսակք փառաց.

Դափձի հիւսկէՑ և ծափք ծափաց
Շատ կ'ընդունիս, գիտեմ՝ իս զայդ,
Բայց քո մակտիմ վայելելու զարդ
«Մրբել զարտօսը որբոյմ միայն»:

ՍՏԵՓԱՆ ԵԱՐՇԱԿՅԱՆ

Մ. Խ. Ընչպէս կը յիշատակէ իւր նամակին մէջ, Պ. Ստեփան Եղաճեան, ազգա-
յին նշանաւոր երգիչն Պ. Ներսէս Շահաճեան այցելէց և սաս 'ի վանս: Քաղցր
տպաւորութիւն մը թողուց մեր վրայ իւր ազգային ոգին և հմտութիւնն, բայց
քաղցրագոյն ևս և ամնուանալի՝ իւր չքնաղ ձայնն. 'ի վանս գրեթէ ամբողջ որ մը
անցընելէ վերջ՝ փոփազեցաւ այցելէլ նաև. Սուրբա-Ռափայելեան վարժարանն
որ 'ի Քաղաքին. Պ. Շահաճեան թեպէտ ծանր Հարբուխով ներեալ՝ բայց չկարե-
նալով ընդդիմանալ աշակերտաց, ուսուցչաց և մանաւանդ վ. Տեսուչին թախան-
ձանաց՝ վարժարանին սակզօծ և Թիէթթօլեան դահլիճին մէջ լսեցուց իւր զարմա-
նալի ձայնն վերտեան և պէլլինեան ինչ ինչ վէպերգաց մէջ: Լսած ենք 'ի վէնե-
տիկ ներկայ ժամանակիս ամենէն հռչակաւոր վերնաբամբը (Tenors) Գամանիո-
բայց մեր քաղ ազգայինն յիշեալ վերնաբամբին կրծային Տօէն աւելի մի նօթ ունի.
այսինքն Ռե մը երկար և ահաւոր: Փայլուն և յալող սպազայ մը մտղծած ժամա-
նակնիս՝ կ'իմացընենք որ մերձաւորապէս առիթ պիտի ունենանք վերստին խօսե-
լու Պ. Շահաճեանի վրայ, եթէ Նա 'ի վէնետիկ գաւառու խոստմունքը պահէ:

ԱՅՆ ԵՒ ԱՅԼԲ



ԵՒՍՁԱՅՆ գտնողը: = Շատերը կը կարծեն թէ հեռաձայնը
խօսըն գտած ըլլայ. սակայն վերջերս հրատարակուած գրքոյկէ
մը կը հաստատուի՝ որ առաջին գտնողն է իտալացին Անտոն Մէ-
ուչչի, որ կը բնակէր 'ի Միացեալ Նահանգս: «Կիրակի առօր
առաջին շրջապայութիւնս (կը գրէ գրքին հեղինակը) Մէուչչիի
այցերութիւնն եղաւ. ութսունի մօտ գեղեցիկ ծերունի մը, որ
երեսուն տարիէ 'ի վեր կը բնակէր 'ի կղզին ('ի Clifton, Staten Island),
ուր գնաց նաև կարգապալտի 1851ին: Այնպիսի կերպ մ'ունէր այս ծերունին՝
որ յակամայս կը յիշեցունէր ինձ վրդէռի խօսքերը. Ներկայ դարուս գրեթէ ա-
մէն գիւտերն իտալացուցն են: Պատանեկութիւնն չափաբերական և բնական
ուսմանց զբաղելով՝ առաջին անգամ՝ ինքը շինեց ճարպաւոր ճրագները խոնաւ
մերձով. պիւս մը՝ զոր գողացաւ իրմէ ճարտարագործ խաբերայ մը. յետոյ ու-
րիշ գանազան գիւտեր ալ բրաւ, որոց մէջ նշանաւորացոյնն է հեռաձայնը. զոր
դարձեալ յափտակեցին իրմէ անվայել կերպով քանի մը ամբերկիցիք: Առա-
ջին տեսակցութեանս՝ այս տեսակետով իրմէ ծանօթութիւններ ինչպէս: Մէ-